



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ**  
**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

21.08.2019թ.


**ՈՐՈՇՈՒՄ 630-Ա**


**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍԻ «Ա.ՕՐՊՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՇԱԽՄԱՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ «ԳՈՐԻՍԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄԻԱՑՄԱՆ ՁԵՎՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասով, 64-րդ հոդվածի 2-րդ մասով, 65-րդ հոդվածի 2-րդ մասով՝

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝**

1. Սյունիքի մարզի Գորիսի «Ա.Օրոյանի անվան շախմատի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 18.210.00826) միացման ձևով վերակազմակերպել միացնելով «Գորիսի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (պետական գրանցման համարը՝ 18.210.00824) հետ:
2. Սահմանել, որ «Գորիսի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը հանդիսանում է Սյունիքի մարզի Գորիսի «Ա.Օրոյանի անվան շախմատի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը և դրանց իրավունքներն ու պարտականություններն անցնում են «Գորիսի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ փոխանցման ակտին համապատասխան:
3. Հաստատել Սյունիքի մարզի Գորիսի «Ա.Օրոյանի անվան շախմատի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության փոխանցման ակտը:
4. Հաստատել «Գորիսի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության և Սյունիքի մարզի Գորիսի «Ա.Օրոյանի անվան շախմատի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության միացման պայմանագիրը, միացման կարգն ու պայմանները՝ համաձայն միացման պայմանագրի:
5. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ կազմել վերակազմակերպված կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ և սույն որոշման հետ միասին ներկայացնել համայնքի ավագանու հաստատմանը:



  
**ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ**